ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/24

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ
Մասնակից՝ «Դաննիկ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Դաննիկ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Պարանյանի, Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցում, սննդամթերքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1524-2020 գրությամբ «Դաննիկ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի 01.02.2020թ. թիվ 80 գրության հիման վրա, 06.02.2020թ. «Դաննիկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 06.02.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/24 համարի ծածկագիրը:

13.02.2020թ.-ին և 27.02.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 27.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 09.03.2020թ.-ին:

2. ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ն 01.02.2020թ. թիվ 80 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար սննդամթերք ձեռք բերելու նպատակով գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/1 ծածկագրով մրցույթին 28.11.2019թ-ին էլեկտրոնային եղանակով հայտ էր ներկայացրել նաև «Դաննիկ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.12.2019թ.-ի թիվ 4 որոշմամբ 2-րդ, 6-րդ, 10-րդ, 14-րդ, 19-րդ, 20-րդ 46-րդ, 59-րդ, 61-րդ, 64-րդ և 67-րդ չափաբաժիններով և

25.12.2019թ.-ի թիվ 5 որոշմամբ 63-րդ չափաբաժնով ընտրված մասնակից էր հայտարարվել «Դաննիկ» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 13-րդ ենթակետով, 09.01.2020թ.-ին «Դաննիկ» ՍՊԸ-ին էր ներկայացրել ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/1-1 ծածկագրով գնանշման հարցման հրավերի պայմանագրի նախագիծը, որակավորման ապահովումը, պայմանագրի ապահովումը և առաջարկել՝ հաստատել այն և հրավերով նախատեսված ժամկետում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ:

«Դաննիկ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված ժամկետում և կարգով ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ին ներկայացրել է 2-րդ, 6-րդ, 10-րդ, 14-րդ, 19-րդ, 20-րդ 46-րդ, 59-րդ, 61-րդ, 64-րդ և 67-րդ չափաբաժիններով ստորագրված պայմանագիրը, որակավորման ապահովումը և պայմանագրի ապահովումը, սակայն հրաժարվել էր 63-րդ չափաբաժնով պայմանագիր կնքելուց:

«Դաննիկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու վերաբերյալ հարցը քննարկելու համար Ձեզ ենք ուղարկում «Դաննիկ» ՍՊԸ-ի հայտի, գնահատող հանձնաժողովի 10.12.2019թ-ի թիվ 4 և 25.12.2019-ի թիվ 5 արձանագրությունների պատճենները:»:

Ի լրումն ներկայացված գրության, Պատվիրատուն 06.02.2020թ.-ին թիվ 93 գրությամբ հավելել է հետևյալը.

«Ի լրումն 01.02.2020 թվականի թիվ 80 գրության Ձեզ ենք տրամադրում« ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/1 ծածկագրով ընթացակարգի շրջանակում «Դաննիկ» ՍՊԸ-ին armeps համակարգի միջոցով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագիր կնքելու նախագիծն ուղարկված լինելու փաստը հավաստող ապացույցը և վերջինիս կողմից կնքված պայմանագիրը, որում բացակայում է 63-րդ չափաբաժինը:»:

3. <u>«Դաննիկ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 07.02.2020թ. գրությամբ դիմել է «Դաննիկ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.02.2020թ.-ի թիվ

26/26-1/1524-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին՝ ներկայացել է հրավիրված նիստերին:

Ներկայացված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Դաննիկ» ՍՊԸ-ն և ընթացակարգի 2, 6, 10, 14, 19, 20, 46, 59, 61, 64, 67 և 63 չաափաբաժինների մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել 09.01.2020թ. «Դաննիկ» ՍՊԸ-ին ներկայացնել «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման հրավերի պայմանագրի նախագիծը, որակավորման ապահովումը, պայմանագրի ապահովումը և առաջարկել՝ հրավերով նախատեսված ժամկետում 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ:

Իսկ արդեն 01.02.2020թ. թիվ 80 գրությամբ պարզ է դարձել, որ «Դաննիկ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ՀՀ ԱՆ «Սնանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ին է ներկայացրել բոլոր չաափաբաժինների ստորագրված պայմանագիրը, որակավորման ապահովումը և պայմանագրի ապահովումը, սակայն հրաժարվել է 63-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելուց:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խարական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ յփնելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուշադրությունն ենք հրավիրում այն կարևոր հանգամանքի վրա, որ առկա են գնահատող հանձնաժողովի կողմից թույլ տված մի շարք խախտումներ, որոնք ոչ իրավաչափորեն հանգեցրել են տվյալ մասնակցի համար գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգ: Մասնավորապես.

Ինչպես արդեն հայտնել ենք «Դաննիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է այն հիմքով, որ Ընկերությունը հրաժարվել է 63-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելուց, այն է պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և Պատվիրատուին ներկայացրել պայմանագրի ապահովումը:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ հետևյալը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ նաև Կարգ/ 45-րդ կետի Օրենքի 6-րդ

հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ինչպես արդեն նշվել է, թիվ ՍՑ-ԼՕ-2020/24 ընթացակարգը նախաձեռնվել է ՀՀ ֆինանսների նախարարության 06.02.2020թ. գրության հիման վրա հիմքում դնելով ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 01.02.2020թ. ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված թիվ 80 գրությամբ «Դաննիկ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին տեղեկատվությունը, որի վերաբերյալ www.gnumner.am տղեկագրում առկա չէ որևէ արձանագրություն, ավելին «Դաննիկ» ՍՊԸ-ին "Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում" ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացված փաստաթղթերում նույնպես առկա չէ որևէ արձանագրություն, որտեղ պարզ կդառնա թե «Դաննիկ» ՍՊԸ-ն «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում Օրենքի կամ Կարգի ինչ կետի խախտումներ է թույլ տվել, որը հիմք ընդունելով ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ն «Դաննիկ» ՍՊԸ-ի տվյալները ներկայացրել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս "Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում" ներառելու նպատակով, քանի որ gnumner.am տեղեկագրում հրապարակված չէ որևէ արձանագրություն, որտեղ նշված կլինի թե «Դաննիկ» ՍՊԸ-ին "Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում" ներառելու նպատակով սահմանված Կարգի 45-րդ կետով նախատեսված հիմքը, երբ է ի հայտ եկել:

Եվ այսպես Պայմանագրի նախագիծը ուղարկվել է «Դաննիկ» ՍՊԸ-ին 09.01.2020թ., որից հետո հրավերով նախատեսված 10 աշխատանքային օրում «Դաննիկ» ՍՊԸ-ն ստորագրված պայմանագրերը /պայմանագրի ապահովումը/ ներկայացրել է 23.01.2020թ.: 23.01.2020թ.-ից հետո թե տեղեկագրում, և թե ՍՊԸ-ին ոչ հրապարակվել և ոչ էլ ուղարկվել է արձանագրություն կամ գրություն, որը թույլ կտար փաստելու, որ առկա է եղել որևէ հիմք՝ Ընկերության տվյալները ներկայացվելու ՀՀ ֆինանսների նախարարություն վերջինիս

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար:

Մինչդեռ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն, ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը օրենքներով (տես, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԷԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):

Ինչպես արդեն հայտնել ենք Կարգի 45-րդ կետի համաձայն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները ՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին...:

Հայտնում ենք, որ վերը նշված ակտի հիմքերն ի հայտ գալու փաստը ֆիքսելու համար մեզ առնվազն անհրաժեշտ էր ունենալ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրություն, որտեղ գնահատող հանձնաժողովի կողմից կարձանագրվեր, որ «Դաննիկ» ՍՊԸ-ն չի հրաժարվել որևէ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելուց, այլ

ընդամենը 23.01.2020թ. ներկայացնելով բոլոր չափաբաժինների մասով ստորագրված պայմանագիրները /պայմանագրի ապահովման հետ միասին/ միայն 63-րդ չափաբաժնի մասով պայմանագրում թույլեր ավել տեխնիկական վրիպակ, որը պարտավորվել էր վերացնելու նույն օրը:

Կարգի 49-րդ կետի համաձայն ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքվելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում հանձնաժողովն ընտրված մասնակցի որոշման նպատակով կիրառում է սույն կարգի 43-48-րդ կետերով նախատեսված պայմանները:

Մինչդեռ իրականում «Դաննիկ» ՍՊԸ-ն ոչ թե հրաժարվել է պայմանագիր կնքելուց, այլ ընդամենը 23.01.2020թ. (պայմանագրի ստորագրման համար նախատեսված վերջին աշխատանքային օրը) ներկայացնելով բոլոր չափաբաժինների մասով ստորագրված պայմանագրերը /պայմանագրի ապահովման հետ միասին/, միայն 63-րդ չափաբաժնի մասով պայմանագրում թույլ է տվել տեխնիկական վրիպակ, որը պարտավորվել է վերացնելու նույն օրը: Ընդ որում թույլ տված վրիպակը պայմանավորված է եղել նրանով, որ բոլոր մնացած չափաբաժիններով ՍՊԸ-ն ի սկզբանն ճանաչվել է հաղթող մասնակից, իսկ այնուհետև 63-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցնող մասնակցի հայտը մերժելու արդյունքում «Դաննիկ» ՍՊԸ-ն ստացել է նաև պայմանագիր կնքելու առաջարկ Ընթացակարգի 63-րդ չափաբաժնով: Համապատասխանաբար, ստորագրելով Ընթացակարգով պայմանագրի նախագիծը ՍՊԸ-ն տեխնիկական վրիպակի արդյունքում նշված նախագծում չի ներառել 63-րդ չափաբաժինը, ինչը պայմանագիրը Պատվիրատուին հանձնելուց հետո նոր հայտնաբերվել է:

«Դաննիկ» ՍՊԸ-ն նշված վրիպակը ուղղել է նույն օրը 23.01.2020թ., աշխատատանքային օրվա վերջին ժամին, սակայն Պատվիրատուն արդեն չի ընդունել բերված պայմանագիրը պատճառաբանելով, որ աշխատաքային օրվա վերջ է, իսկ ինքը արդեն որպես հիմք ընդունել և համակարգ է ներբեռնել նախորդ ստորագրած պայմանագիրը:

Ի մի բերելով վերը նշված փաստերն ու փաստական հանգամանքները գտնում ենք, որ «Դաննիկ» ՍՊԸ-ի կողմից թույլ չի տրվել "Գնումների մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի "ա" ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության որևէ խախտում, ուստի և առկա չեն

«Դաննիկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:»:

Ելնելով վերոգրյալից, Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Դաննիկ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2020/24 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Դաննիկ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.12.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ 2-րդ, 6-րդ, 10-րդ, 14-րդ, 19-րդ, 20-րդ 46-րդ, 59-րդ, 61-րդ, 64-րդ և 67-րդ չափաբաժիններով ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Դաննիկ» ՍՊԸ-ին:

Հանձնաժողովի 25.12.2019թ.-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ 63-րդ չափաբաժնով ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Դաննիկ» ՍՊԸ-ին:

www.gnumner.am կայքում 23.01.2020թ.-ին հրապարակված գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով ընթացակարգի 63-րդ չափաբաժինը հայտարարվել է չկայացած՝ ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչված «Դաննիկ» ՍՊԸ-ի կողմից պայմանագիր կնքելուց հրաժարվելու հանգամանքի հաշվառմամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1524-2020 գրությամբ «Դաննիկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ իր գործողություններով (անգործությամբ) պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

www.gnumner.am կայքում 23.01.2020թ.-ին հրապարակված գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով ընթացակարգի 63-րդ չափաբաժինը հայտարարվել է չկայացած՝ ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչված «Դաննիկ» ՍՊԸ-ի կողմից պայմանագիր կնքելուց հրաժարվելու հանգամանքի հաշվառմամբ:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 2-րդ, 6-րդ, 10-րդ, 14-րդ, 19-րդ, 20-րդ 46-րդ, 59-րդ, 61-րդ, 64-րդ և 67-րդ չափաբաժիններով ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչված «Դաննիկ» ՍՊԸ-ն ներկայացրել է իր կողմից կնքված պայմանագրի օրինակը, իսկ 63-րդ չափաբաժնով հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Դաննիկ» ՍՊԸ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, զրկվել է պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1524-2020 գրությամբ «Դաննիկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/24 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Դաննիկ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**